# *Մրցանակաբաշխություն կանցկացվի*

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում սեպտեմբերի 26-ին մեկնարկել է «Մոլեկուլային եւ բջջային կենսաբանության զարգացման հեռանկարներ–3» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովը: Գիտաժողովը կազմակերպել է Մոլեկուլային եւ բջջային կենսաբանության եւ իմունաբանության հայկական ասոցիացիան: Գիտաժողովին մասնակցում են Հայաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ռուսաստանի Դաշնության երիտասարդ գիտնականներ:

Ինչպես «Արմենպրեսին» տեղեկացրին ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոնից, ներկայացված զեկույցների արդյունքների հիման վրա տեղի կունենա մրցանակաբաշխություն, եւ կշնորհվեն երեք մրցանակ՝ 1. գիտությունների թեկնածուի լավագույն զեկույց, 2. մագիստրոսի եւ/կամ ասպիրանտի լավագույն զեկույց, 3. ստենդային լավագույն աշխատանք անվանակարգերում: